

## Ձեռնարկությունների Եվրոպական Ցանց Հայաստան



# ՏԵՂԵԿԱԹԵՐԹ #02

Փետրվար 2018

Երևան, Հայաստան



# Բովանդակություն

Գործարար համագործակցության առաջարկներ և հարցումներ.....	3
Մանրի վերամշակում .....	3
Տեքստիլ արտադրություն .....	6
Շինարարություն .....	9
R&D .....	12
Տեղեկատվական տեխնոլոգիաներ .....	14
Կոսմետիկա .....	16
Դեղագործություն .....	18
Այլ ոլորտներ .....	20
Տեխնոլոգիական համագործակցության հարցումներ և առաջարկներ.	21
Եվրոպական նորություններ և միջոցառումներ.....	23

# Գործարար համագործակցության առաջարկներ և հարցումներ

Հայաստանյան ՓՄՁ-ների միջազգային գործարարության զարգացման և արտասահմանյան գործընկերների հետ կապեր հաստատելու նպատակով ՁԵՅ Հայաստանը ուշադրությանն է ներկայացնում գործարար համագործակցության հետևյալ առաջարկները.

## Մանդի վերամշակում



### Գործարար համագործակցության առաջարկներ

#### Բսպանական արտադրողը փնտրում է դիստրիբյուտորներ

Բսպանական ընկերությունը, որն արտադրում է մանկական սնունդ պլաստիկ տարաների մեջ, ինչպես նաև ամբողջ ընտանիքի համար նախատեսված հատուկ սննդակարգով ապրանքներ (օրինակ՝ յոգուրտներ, պյուրեներ) մասնավոր պիտակի ներքո, փնտրում է դիստրիբյուտորներ և վերավաճառողներ արտասահմանում:

Ծածկագիր. BOES20170926001

#### Լեհական ընկերությունը ցանկանում է համագործակցել լիցենզիոն պայմանագրի շրջանակում

Կենտրոնական Լեհաստանում գործող ընկերությունը մասնագիտացած է թխվածքների և կաթնամթերքի արդյունաբերության ոլորտներում տրանսգլուտամինազի կիրառման մեջ: Ողջ արտադրանքն արտոնագրված է և պաշտպանված: Ընկերությունը ցանկանում է լայնամասշտաբ համագործակցել լիցենզիոն պայմանագրի շրջանակում տարբեր երկրների ներկայացուցիչների հետ: Ընկերությունը փնտրում է գործընկեր սննդի ոլորտում, հատկապես՝ թխվածքների և պանրի արտադրությամբ զբաղվող ընկերությունների, որոնք կարող են կիրառել տրանսգլուտամինազի տեխնոլոգիան իրենց արտադրական գործընթացի մեջ:

Ծածկագիր. BOPL20170920002

---

### **Լիտվական ընկերությունը փնտրում է առևտրի միջնորդներ**

Լիտվական ընկերությունն արտադրում է երեխաների համար նախատեսված բնական պյուրեներ: Արտադրանքը ստեղծվել է բժիշկ մանկաբույժների հետ համագործակցության արդյունքում և պարունակում է երեխաների համար անհրաժեշտ բոլոր բնական հանքանյութերը, վիտամինները և այլ արժեքավոր սննդանյութեր: Ընկերությունը ցանկանում է համագործակցել առևտրային գործակալի կամ դիստրիբյուտորական ծառայությունների մատուցման պայմանագրի շրջանակում:

**Ծածկագիր. BOLT20171207002**

### **Իտալական ընկերությունը փնտրում է դիստրիբյուտորներ**

Ընկերությունը գտնվում է Իտալիայի հարավում և մասնագիտացած է տարբեր տեսակի սննդամթերքի վաճառքով (սոուսներ, համեմունքներ սխտորի հացի համար, ձիթապտուղներ աղի մեջ): Ընկերությունը փնտրում է դիստրիբյուտորներ՝ իր գործունեությունն արտասահմանում ընդլայնելու համար:

**Ծածկագիր. BOIT20171128003**

### **Գինի արտադրողը փնտրում է դիստրիբյուտորներ**

Բուլղարական ընկերությունը, որն արտադրում է բարձրորակ տեղական և սահմանափակ արտադրության գինիներ (հատուկ և պահեստային խմբաքանակ) պիտակավորված սպառողի համար նախատեսված մասնագրերով, փնտրում է դիստրիբյուտորներ արտասահմանում:

**Ծածկագիր. BOBG20170913001**

---

## Գործարար համագործակցության հարցումներ

---

**Կիպրոսյան ընկերությունը ցանկանում է համագործակցել առևտրային և դիստրիբյուտորական ծառայությունների մատուցման պայմանագրի շրջանակում:**

Կիպրոսյան ընկերությունը, որի գործունեության հիմնական ուղղությունը սննդամթերքի (միս և ձուկ) և այլ ապրանքների արատահանումն է, փնտրում է արտադրողներ/մատակարարներ/սպանդանոցներ (տավարի, խոզի, հավի և հնդկահավի) առևտրային կամ դիստրիբյուտորական ծառայությունների մատուցման պայմանագրի շրջանակում համագործակցելու համար:

**Ծածկագիր. BRCY20171114001**

### **Իսպանական ընկերությունը փնտրում է արտադրող**

Վերջերս հիմնադրված իսպանական ընկերությունը, որը զբաղվում է խմիչքներ արտադրությամբ և ինքնատաքացվող խմիչքների արտադրությամբ, փնտրում է սննդի համար նախատեսված մետաղական խցաններ, որոնք կարող են կիրառվել ինքնատաքացման ժամանակ: Ակնկալվում է համագործակցել արտադրական պայմանագրի շրջանակում:

**Ծածկագիր. BRES20180104001**

### **Քաթարում գտնվող առաջատար ընկերությունը փնտրում է մատակարարներ**

Քաթարում գործող ընկերությունը հանդիսանում է առաջատար՝ գյուղատնտեսության և սննդի ոլորտում դիստրիբյուտորական գործունեություն իրականացնելու հարցում (թարմ մթերքի և բանջարեղենի մատակարարում): Ընկերությունը փնտրում է սննդի ոլորտում մատակարարներ /արտադրողներ դիստրիբյուտորական ծառայությունների մատուցման շրջանակում համագործակցելու համար:

**Ծածկագիր. BRQA20171219001**

---

# Տեքստիլ արտադրություն



## Գործարար համագործակցության առաջարկներ

### Պաշտպանիչ տեքստիլի առաջատար մատակարարը ցանկանում է համագործակցել

Իսրայելական ընկերությունն ունի 40 տարուց ավել փորձ պաշտպանիչ տեքստիլի արտադրության, մարքեթինգի և դիստրիբյուտորական գործունեության բնագավառներում, ներառյալ՝ քիմիական, կենսաբանական, ռադիացիոն կամ միջուկային պաշտպանիչ (CBRN) կոստյումներ, արտաքին պաշտպանական հագուստ, դաշտային տեխնիկա (վրաններ, պայուսակներ), որոնք մատակարարվում են տարբեր անվտանգության ուժերին, ներառյալ Իսրայելի պաշտպանության ուժերին (IDF) և քաղաքացիական հաճախորդներին: Ընկերությունը ցանկանում է համագործակցել դիստրիբյուտորական, արտադրական և ֆրենչայզինգի պայմանագրերի շրջանակներում:

**Ծածկագիր. BOIL20171205001**

### Ռումինական արտադրողը ցանկանում է համագործակցել դիստրիբյուտորական և ենթակապալառուի ծառայությունների մատուցման շրջանակներում

Ռումինական ընկերությունն արտադրում է բարձրորակ տեքստիլ, արհեստական կաշվե և բնական կաշվե աթոռներ ու բազմոցներ: Նրանք առաջարկում են իրենց կողմից նախագծված արտադրանք՝ կահույքի ոլորտում իրացնելու և տարածելու համար: Ընկերությունն առաջարկում է նաև իր պոստենցիալ գործընկերներին ենթակապալառուի ծառայությունների շրջանակում բարձրորակ բազմոցներ և դասական կամ ժամանակակից դիզայնով աթոռներ:

**Ծածկագիր. BORO20161229002**

### Մլովենական արտադրողը փնտրում է դիստրիբյուտորներ

Մլովենական ընկերությունը, որը մասնագիտացած է ֆունկցիոնալ և նորաձև իրերի արտադրության ոլորտում, մշակել է բարակ դրամապանակներ, որոնք կարելի է կրել նաև գոտու շուրջ: Ընկերությունը ցանկանում է համագործակցել դիստրիբյուտորների հետ:

**Ծածկագիր. BOSI20171227001**

## **Լեհական ՓՄՁ-ն առաջարկում է համագործակցել տարածման ծառայությունների մատուցման շրջանակում**

Լեհաստանի արևելքում գործող ընկերությունը, որը զբաղվում է տարբեր չափսերի, նյութերի ու գույների հագուստի և կարի կոճակների արտադրությամբ և վաճառքով, ցանկանում է համագործակցել դիստրիբյուտորական ծառայությունների մատուցման պայմանագրի շրջանակում:

**Ծածկագիր. BOPL20160517001**

## **Ռումինական արտադրողը փնտրում է նոր գործընկերներ**

Ռումինական ընկերությունը, որը հիմնադրվել է 2001 թ.-ին Տրանսիլվանիայում, գործում է պատրաստի տեքստիլ արտադրանքի ոլորտում և զբաղվում է փաթեթավորման, բժշկական պայուսակների, դրամապանակների, փոստային պայուսակների և ծրարների, անվտանգության կնիքների և այլ ապրանքների արտադրությամբ: Ներգրավված լինելով միջազգային համագործակցության մեջ՝ ընկերությունը ցանկանում է համագործակցել առևտրային գործակալի պայմանագրի շրջանակում այն գործընկերների հետ, ովքեր կներկայացնեն ռումինական արտադրանքը միջազգային շուկայում:

**Ծածկագիր. BORO20161011001**

## **Լիտվական ընկերությունը փնտրում է առևտրի միջնորդներ**

Լիտվական ընկերությունը մասնագիտացած է բազմատեսակ թելերի արտադրության և մեծածախ վաճառքի ոլորտում: Ընկերությունը ցանկանում է համագործակցել տարածման կամ առևտրային գործակալի ծառայությունների մատուցման շրջանակներում:

**Ծածկագիր. BOLT20180105001**

## Գործարար համագործակցության հարցումներ

### Մատակարարը փնտրում է գործվածքներ արտադրողներ

Հյուսիսային Իռլանդիայում (Միացյալ Թագավորություն) գործող ընկերությունը փնտրում է գործվածքներ արտադրողներ, ովքեր կարող են արտադրել բարձրորակ խոհանոցային գործվածքներ, ինչպիսիք են՝ անձեռոցիկները, սփռոցները և այլ պարագաներ՝ ենթակապալառուի պայամանագրի շրջանակում:

Ծածկագիր. BRUK20180110002

### Բելգիական առցանց խանութը ցանկանում է համագործակցել արտադրական պայամանագրի շրջանակում:

Բելգիական ընկերությունը, որը հիմնադրվել է 2016թ.-ին, ունի մասնագիտացված առցանց խանութ, որտեղ վաճառում է երեխաների համար նախատեսված հագուստ: Ընկերությունը գործում է օրգանական և կայուն սկզբունքների վրա: Այն փնտրում է գործընկեր, ով կնախագծի և կարտադրի GOTS սերտիֆիկատով հագուստ և աքսեսուարներ 0-12 տարեկան երեխաների համար իրենց ապրանքանիշի ներքո, սեփական տպագրությամբ, պիտակով և լոգոյով: Ակնկալվում է հմագործակցել արտադրական պայամանագրի շրջանակներում:

Ծածկագիր. BRBE20170601001



# Շինարարություն



## Գործարար համագործակցության առաջարկներ

### Ալբանական շինարարական ընկերությունն առաջարկում է համագործակցել ենթակապալառուի ծառայությունների մատուցման շրջանակում:

Բնակելի և արդյունաբերական շինարարության ոլորտում բարձր որակավորում ունեցող ալբանական ընկերությունը փնտրում է գործընկերներ, որոնք ներգրավված են շինարարական աշխատանքներում՝ ենթակապալառուի ծառայությունների մատուցման պայմանագրի շրջանակներում համագործակցելու համար:

Ծածկագիր. BOAL20170801001

### ՓՄՁ-ն փնտրում է նորարարական շինանյութերի արտադրության հնարավորություններ

Սկսած 2001 թ-ից՝ այս բրիտանական ընկերությունն արտադրում է պողպատով ձևավորված շինանյութեր, ինչպիսիք են՝ մուտքի վահանակներ, օդափոխիչի կափույրներ, պողպատե բաղադրիչներ և մետաղական պարագաներ: Ընթացիկ արտադրանքի շրջանակում են պատի և առաստաղի մուտքի վահանակները, որոնք արտադրվում են եվրոպական որակի ամենաբարձր չափանիշներով: Այժմ նրանք փնտրում են նորարարական շինանյութերի արտադրության հնարավորություններ:

Ծածկագիր. BOUK20171120003

### Իսպանական ընկերությունը ցանկանում է համագործակցել տարածման և ծառայությունների մատուցման պայմանագրերի շրջանակում

Իսպանական ընկերությունը, որը մասնագիտացած է նախապես գծագրված պողպատե շենքերի (պահեստներ, կորպորատիվ գրասենյակներ, առևտրի կենտրոններ, սպորտային կենտրոններ, տանիքի ծածկոցներ, ուսանողական բնակարաններ, մասնագիտական ուսումնական հաստատություններ, լոգիստիկ շենքեր) կառուցման ոլորտում, առաջարկում է մետաղական կառույցներ և ցանկանում է համագործակցել դիստրիբյուտորական և ծառայությունների մատուցման պայմանագրերի շրջանակում այն ընկերությունների հետ, որոնք գործում են նույն ոլորտում:

Ծածկագիր. BOES20171025001

**Լեհական ընկերությունը ցանկանում է համագործակցել արտադրական պայմանագրի շրջանակում:**

Լեհական ընկերությունը հանդիսանում է կոմպոզիտային նյութերի արտադրության տեխնոլոգիաների առաջատարներից մեկը և առաջարկում է տարբեր տեսակի բետոնե կառույցների համար ամրացված համալիր բլոկների լայն տեսականի: Ընկերությունը փնտրում է գործընկերներ՝ արտադրական պայմանագրի շրջանակում համագործակցելու համար:

**Ծածկագիր. BOPL20170913001**

**Իսպանական ընկերությունը ցանկանում է համագործակցել առևտրային գործակալի և դիստրիբյուտորական ծառայությունների մատուցման պայմանագրերի շրջանակում**

Այս իսպանական ընկերությունը մատակարարում է շինարարական աշխատանքի համար նախատեսված լայն տեսականի՝ սկսած 2005թ.-ից: Արտադրանքը պատրաստվում է լավագույն ինժեներական և արտադրական ընկերությունների հետ: Արտադրանքը ներառում է սալիկներ, տանիքներ, մետաղական ճակատներ, ջերմային ակուստիկ մեկուսացման և հրդեհային պաշտպանության համակարգեր, հավաքվող տներ: Ընկերությունը փնտրում է առևտրային գործակալներ և դիստրիբյուտորներ:

**Ծածկագիր. BOES20160218002**

**Ռուսական արտադրողը փնտրում է գործակալներ**

Ռուսական ընկերությունը, որը զբաղվում է մետաղական կոնստրուկցիաների արտադրությամբ, նախագծմամբ, մատակարարմամբ և հսկողությամբ, փնտրում է գործընկերներ առևտրային գործակալի պայմանագրի շրջանակում համագործակցելու համար:

**Ծածկագիր. BORU20160404004**

## Գործարար համագործակցության հարցումներ

### Ռուսական շինարարական ընկերությունը փնտրում է մատակարարներ

Առևտրով և շինարարությամբ զբաղվող ռուսական ընկերությունը փնտրում է լամինատ մատակարարողներին: Ընկերությունը ցանկանում է համագործակցել դիստրիբյուտորական ծառայությունների մատուցման պայմանագրի շրջանակում:

Ծածկագիր. BRRU20171222019

### Լիտվական ընկերությունն առաջարկում է առևտրային գործակալի կամ դիստրիբյուտորական ծառայությունների մատուցման պայմանագրերի շրջանակում համագործակցություն

Լիտվական ընկերությունը, որն ավելի քան 15 տարի ակտիվ գործում է որպես շինարարական և վերականգնողական աշխատանքների համար քիմիական արտադրանքի առևտրային միջնորդ, ցանկանում է ընդլայնել իր տեսականին: Ընկերությունը փնտրում է պատուհանի և դռների ներկեր արտադրողներ և / կամ մատակարարներ: Ընկերությունն առաջարկում է առևտրային միջնորդի ծառայություններ:

Ծածկագիր. BRLT20171207001



**Իսպանական գիտահետազոտական ինստիտուտը նախագծային առաջարկին դիմելու համար փնտրում է CO2 գործընթացի հիդրոհանգույցի և մետրանոլից բենզինային գործընթացների փոխակերպան ոլորտում փորձ ունեցող գործընկերոջ**

Իսպանական տեխնոլոգիական կենտրոնը նախապատրաստում է նախագծային առաջարկ (H2020-CE-SC3-NZE-2-2018), որի նպատակն է մշակել նոր երկֆունկցիոնալ կատալիզատորներ՝ հիմնված մետաղական նանո-օքսիդների, ինչպես նաև բարելավված ու հարմարեցված զեոլիտների վրա, որոնք կօգտագործվեն CO2- ից հեղուկ վառելիք փոխարկման գործընթացում: Կենտրոնը փնտրում է ընկերությունների և գիտահետազոտական ինստիտուտների, որոնք գործում են CO2- ից մեթանոլ և նրանից հեղուկ վառելիքի փոխարկման ոլորտում:

[Ծածկագիր. RDES20171222002](#)

**H2020 - SC1-BHC-23-2018: Իսպանական ՓՄՁ-ն փնտրում է գործընկերներ՝ բիոմարկերային վերլուծության և դեղագործության բնագավառում, ինչպես նաև բնական արտադրանքից սննդային հավելումներ պատրաստողների և առողջապահական ծրագրեր մշակողների**

Իսպանական ՓՄՁ-ն, որը մասնագիտացած է Ռազմավարական կլինիկական փորձերի նախագծման և կառավարման մեջ, նախապատրաստում է H2020-SC1-BHC-23-2018 ծրագրի համար դիմում: Ծրագրի նպատակն է գնահատել մեկ խոստումնալից բնական բաղադրիչի արդյունավետությունը, որպես սննդային հավելում, քաղցկեղի բուժման հետ կապված կոդմնակի ազդեցությունների բարելավման գործում: Նրանք փնտրում են՝ բիոմարկերային վերլուծության և դեղագործության բնագավառում, ինչպես նաև սննդային հավելումներ պատրաստող և առողջապահական ծրագրեր մշակող գործընկերներ: Նրանք փնտրում են նաև համակարգող:

[Ծածկագիր. RDES20180124001](#)

---

**H2020 SC5-20-2019 call. Partners with expertise in cultural/historic innovation, entrepreneurship, climate and environment action sought.**

Փնտրվում են գիտահետազոտական ինստիտուտներ, ՀԿ և/կամ ՓՄՁ-ներՓՄՁ-ն Բոսնիա և Հերցեգովինայից, որը մասնագիտացած է սոցիալական և տնտեսական զարգացման, կլիմայական և բնապահպանական գործողությունների ծրագրերում, փնտրում է գործընկերներ (ՓՄՁ-ներ, ՀԿ-ներ, գիտահետազոտական կենտրոններ) Հ2020 ծրագրին դիմելու համար: Ծրագրի հիմնական նպատակն է խթանել ժառանգությունը և մշակույթին առնչվող նորարարությունը ինչպես նաև ձեռնարկատիրությունը պատմական քաղաքային վայրերում և մշակութային լանդշաֆտներում:

**Ծածկագիր. RDBA20171108001**

---

# Տեղեկատվական տեխնոլոգիաներ



## Գործարար համագործակցության առաջարկներ

### Ռումինական ընկերությունն առաջարկում է աութսորսինգային և ենթակապալառուի ծառայություններ

Ընկերությունը, որը մասնագիտացած է ծրագրային ապահովման մշակման ոլորտում, առաջարկում է աութսորսինգային ծառայություններ բոլոր այն ընկերություններին, որոնք փնտրում են ծրագրային ապահովման մշակման ծառայություններ և բաց են համագործակցության համար որպես ենթակապալառու՝ SS ոլորտում գործող այլ ընկերությունների համար: Ընկերությունը մասնագիտացված է ծրագրային ապահովման մշակման մեջ և ներգրավված է ճապոնական շուկայի համար բազմաթիվ հաջողված միջազգային նախագծերում: Նրանք փնտրում են գործընկերներ ծրագրեր իրականացնելու կամ հաճախորդի պահանջով նոր նախագծեր մշակելու համար:

Ծածկագիր. BORO20160614001

### Լեհական ընկերությունը ցանկանում է համագործակցել ծառայությունների մատուցման պայմանագրի շրջանակում

Լեհական ընկերությունը ապահովում է անհատականացված ծրագրային լուծումներ, ինչպիսիք են՝ ներդրված համակարգերը, տվյալների բազաների վերլուծությունը, վերլուծությունը և դիզայնը, աջակցությունը և սպասարկումը, ինչպես նաև աուդիտային ծրագրային լուծումը: Ընկերությունը ցանկանում է համագործակցել ծառայությունների մատուցման պայմանագրի շրջանակում:

Ծածկագիր. BOPL20160921004

### Բուլղարական ընկերությունը փնտրում է առևտրային գործակալների

Բուլղարական ծրագրային ապահովման ընկերությունը, որը գործում է բժշկության, անվտանգության, կրթության, հեռահաղորդակցման, հանգստի, սննդի ոլորտներում, փնտրում է առևտրային գործակալների: Ընկերությունը ստեղծում է ծրագրային ապահովման պրոդուկտներ և լուծումներ: Հնարավոր գործընկերները պետք է զբաղվի վեր լուծումներով և

պետք է կարողանա խթանել ու ներկայացնել ընկերությունների ծրագրային լուծումները տեղական շուկայում հնարավոր հաճախորդների համար: Ընկերությունը կարող է նաև տրամադրել աութօրսինգային ծառայություններ:

Ծածկագիր. BOBG20171211001

### **Նորարարական ուկրաինական SS ընկերությունը ցանկանում է համագործակցել**

Ուկրաինական անհատականացված ծրագրային լուծումներ մշակող ընկերությունը պատրաստ է տրամադրել նորարարական ծրագրային լուծումներ (բլոկ ցանցային տեխնոլոգիաներ, բջջային հավելվածներ, վճարային լուծումներ, ամպային հաշվարկներ, կայքեր, վաճառքի լուծումներ) զարգացման բոլոր փուլերում և առաջարկում է աութօրսինգային և ծառայությունների մատուցման պայմանագրեր:

Ծածկագիր. BOUA20171227001

### **Ռումինական SS ընկերությունը ցանկանում է համագործակցել**

Ռումինական SS ընկերությունն առաջարկում է վեբ հոսթինգ և հարակից ծառայություններ, ներառյալ վեբ դիզայն, բրենդինգ և բջջային սարքերի համար ծրագրային հավելվածներ: Կիրառելով ժամանակակից տեխնոլոգիաներ, ընկերությունը մտադիր է դիվերսիֆիկացնել իր արտադրանքը և ընդլայնել հաճախորդների թիվը: Ընկերությունը ցանկանում է համագործակցել ցանկացած ոլորտում գործող շահառուների հետ ծառայությունների մատուցման պայմանագրի շրջանակում:

Ծածկագիր. BORO20180118003

### **Քաթարում գտնվող ընկերությունը փնտրում է դիստրիբյուտորներ կամ լիցենզիա**

Քաթարում գործող ծրագրային ապահովմամբ զբաղվող ընկերությունը մշակել է բջջային հավելված և հարթակ: Հաստատությունների ղեկավարները և սեփականատերերը կարող են բարելավել հաճախորդների հետ իրենց հարաբերությունները՝ օգտագործելով բջջային հավելվածը և վեբ հարթակը՝ հաղորդելու, կառավարելու և վերլուծելու իրենց սեփական տարածքում տեղի ունեցած միջադեպերը: Ընկերությունը փնտրում է դիստրիբյուտորների և/կամ լիցենզիա իր ամպային հարթակով ծրագրային լուծման համար:

Ծածկագիր. BOQA20171005001



## Գործարար համագործակցության առաջարկներ

### Իտալական մատակարարը փնտրում է դիստրիբյուտորներ

Իտալական ընկերությունը, որը մասնագիտացած է նորարարական օրգանական կոսմետիկ միջոցների արտադրության ոլորտում, փնտրում է գործընկերներ, ովքեր հետաքրքրված կլինեն մարմնի և մազերի խնամքի միջոցների ներմուծմամբ և վաճառքով: Ընկերությունն առաջարկում է դիստրիբյուտորական ծառայությունների մատուցման պայմանագրի շրջանակում համագործակցություն:

Ծածկագիր. [BOIT20171219001](#)

### Բուլղարական արտադրողը փնտրում է դիստրիբյուտորներ

Բուլղարական ընկերությունը, որը տեղակայված է Սև Ծովի ափին, արտադրում է բնական կոսմետիկ միջոցների մեծ տեսականի՝ պատրաստված սևծովյան մոխրաջրից: Այս բաղադրիչը օժտված է բուժիչ հատկություններով: Ընկերությունը փնտրում է առևտրի միջնորդներ՝ նոր շուկաներ գրավելու համար:

Ծածկագիր. [BOBG20171108001](#)

### Մեծ Բրիտանիայում գործող ընկերությունը փնտրում է դիստրիբյուտորներ

Մեծ Բրիտանիայում գործող ընկերությունն, առաջարկում է մոր և մանկան համար նախատեսված մաշկի խնամքի միջոցներ՝ պատրաստված կոկոսի յուղից և փնտրում է դիստրիբյուտորներ: Արտադրանքը ոգեշնչված է ավանդական մալագիական գեղեցկության ծեսերից և հանդիսանում է կոկոսի յուղի և բույսերի վրա հիմնված արոմաթերապիկ քաղվածքների պրեմիում խառնուրդ:

Ծածկագիր. [BOUK20180206001](#)



### **Իտալական ընկերությունը փնտրում է գործակալներ և դիստրիբյուտորներ**

Իտալական կենսաբանական հետազոտողների խումբն արտադրում է բնական և օրգանական կոսմետիկ միջոցներ տեղական հումքից, որոնք չեն պարունակում արհեստական կամ քիմիական բաղադրիչներ: Ընկերությունը փնտրում է գործակալներ և դիստրիբյուտորներ օրգանական կոսմետիկայի ոլորտում:

**Ծածկագիր. BOIT20161130001**

### **Հունական արտադրողը փնտրում է դիստրիբյուտորներ և արտահանողներ**

Հունական ընկերությունը, որը հանդիսանում է ձիթապտղի յուղի արտահանող և արտադրող, շահագրգռված է եվրոպական շուկա մուտք գործելու մեջ և փնտրում է դիստրիբյուտորներ: Ապրանքների շարքը, որոնք վաճառում է ընկերությունը, ներառում են ձիթապտղի յուղ, ձիթապտղի յուղի վրա հիմնված կոսմետիկա և կոսմետիկ օձառ:

**Ծածկագիր. BOGR20161018003**

## **Գործարար համագործակցության հարցումներ**

### **Առաջատար շվեդական ընկերությունը փնտրում է ապրանքներ շվեդական շուկայում ներկայացնելու համար**

Շվեդական ընկերությունը, որը զբաղվում է տարբեր ապրանքների վաճառքով, մարքեթինգային գործունեությամբ և տարածմամբ, առաջարկում է իր ծառայությունները որպես առևտրի միջնորդ այն ընկերություններին, որոնք արտադրում են էկոլոգիապես մաքուր և օրգանական խնամքի միջոցներ և ցանկանում են մուտք գործել Շվեդական շուկա: Ընկերությունն առաջարկում է համագործակցել տարածման և առևտրային պայմանագրերի շրջանակում:

**Ծածկագիր. BRSE20180130002**



Business Support on Your Doorstep

## Գործարար համագործակցության առաջարկներ

### Լեհական արտադրողը փնտրում է դիստրիբյուտորներ և արտադրողներ

Լեհական ընկերությունը, որը մասնագիտացած է դիետիկ հավելումների արտադրության ոլորտում (կարամելի հիման վրա, բուսական և վիտամինային քաղվածքների հավելումով), փնտրում է իրենց արտադրանքի համար մատակարարներ և արտադրական պայմանագրով հետաքրքրված գործընկերների:

Ծածկագիր. BOPL20180104001

### Գերմանական ընկերությունը ցանկանում է համագործակցել առևտրային գործակալի կամ դիստրիբյուտորական ծառայությունների մատուցման պայմանագրի շրջանակներում

Գերմանական ընկերությունն արտադրում է բժշկական գործիքներ նախատեսված մաշկի բիոփսիայի և այլ գործընթացների համար և փնտրում է առևտրային գործակալներ ու դիստրիբյուտորներ: Այդ գործիքները կարող են օգտագործվել դերմատոլոգիայի, գինեկոլոգիայի, ուրոլոգիայի կամ պլաստիկ վիրաբուժության մեջ: Գործիքները չափազանց սուր են:

Ծածկագիր. BODE20180206002

### Ընկերությունը փնտրում է դիստրիբյուտորներ

Ընկերությունը Միացյալ Թագավորությունից, որն առաջարկում է առաջին օգնության, բժշկական և արտակարգ իրավիճակների համար նախատեսված փրկարարական արտադրանք , փնտրում է դիստրիբյուտորներ Եվրոպայում: Ընկերության գլխամասը Ուեստ Միդլենդսում է, և այն աջակցություն է տրամադրում Եվրոպայում աճող իր դիստրիբյուտորական ցանցին:

Ծածկագիր. BOUK20180117001

## Գործարար համագործակցության հարցումներ

### Փնտրվում են արտադրողներ

Կիպրոսում գործող ներմուծողը և դիստրիբյուտորը փնտրում է դեղագործական, ինչպես նաև առողջապահական ապրանքներ արտադրողների առևտրային գործակալության և դիստրիբյուտորական ծառայությունների մատուցման պայմանագրերի շրջանակներում համագործակցելու համար: Ընկերությունը փնտրում է գործընկերներ, նրանց արտադրանքը (բացառությամբ դեղերի) Կիպրոսում վաճառելու կամ ներկայացնելու համար:

Ծածկագիր. BRCY20170405001



## Գործարար համագործակցության առաջարկներ

### Չեխական ընկերությունն առաջարկում է համագործակցել

Չեխական ընկերությունն ունի 30 տարվա փորձ պլաստիկ համաձուլվածքների արտադրության ոլորտում: Ընկերությունը հանդիսանում է հուսալի մատակարար էլեկտրատեխնիկայի, ջրի, քաղաքացիական ինժեներիայի և ավտոմոբիլային արդյունաբերության ոլորտների համար: Ընկերության գործունեությունը կարելի է բաժանել 4 հիմնական կատեգորիաների՝ նախագծման և մշակման, ձուլվածքների արտադրություն, համաձուլվածքների ձևավորում, վերանորոգում : Ընկերությունը ցանկանում համագործակցել արտադրական պայմանագրի շրջանակում:

Ծածկագիր. BOCZ20171002001

### Գերմանական արտադրողը ցանկանում է համագործակցել

Մետաղների մշակման ոլորտում ակտիվ գործունեություն ծավալող գերմանական մետաղական կոնստրուկցիաներ արտադրող ընկերությունն առաջարկում է բարձրորակ մետաղական կոնստրուկցիաներ, ինչպես նաև թիթեյա մետաղական արտադրանքներ: Ակնկալվում է համագործակցություն արտադրական կամ ենթակապալառուի պայմանագրերի շրջանակում:


Ծածկագիր. BODE20171110001

### Լեհական ընկերությունն առաջարկում է արքեսուարներ

Լեհաստանում գործող ընկերությունը մասնագիտացած է երեխաների համար նախատեսված արքեսուարների արտադրության ոլորտում, որոնք օգտագործվում են ավտոմեքանայով ճանապարհորդելու ընթացքում: Ընկերությունն առաջարկում է բարձրորակ արտադրանք և ցանկանում է համագործակցել վերավաճառողների, ցանցային խանութների, ինչպես նաև խախալիքների և ինտերնետային խանութների հետ՝ իր արտադրանքը նոր շուկաներում ընդլայնելու համար:

Ծածկագիր. BOPL20160309001

# Տեխնոլոգիական համագործակցության հարցումներ և առաջարկներ



## Տեխնոլոգիական համագործակցության առաջարկներ

### Ջերմահաղորդիչ արհեստական կաշի

Գերմանական ՓՄՁ-ն, որը գործում է տեքստիլի, նյութերի և էլեկտրոնային մշակման ոլորտներում, այլ ընկերության հետ համագործակցելով մշակել է ջերմահաղորդիչ արհեստական կաշի՝ բաղկացած էլեկտրական տեքստիլային շերտից և ծանր պլաստիկ ծածկույթից: Արտադրանքը կարող է օգտագործվել որպես ինքնաջեռուցվող ծածկոց: Ընկերությունները փնտրում են գործընկերներ՝ տեխնիկական աջակցության և/կամ տեխնիկական համագործակցության շրջանակներում համագործակցելու համար:

Ծածկագիր. [TODE20170831003](#)

### Սառը օդի տաքացում մինչ տաքացնող պոմպերը և օդափոխման համակարգերը գործի դնելը

Կիևիում (Ուկրաինա) գործող ընկերությունն առաջարկում է ջերմացնող օդրակիչ օդափոխման համակարգերի և էներգիայի սպառման նվազեցման և բարձրացման համար: Այն օգտագործում է ջրի բյուրեղացման ջերմությունը օդ-օդ և օդ-ջուր փոխակերպվող ջերմային պոմպերի(HP) գործակիցը 5 ° C- ից ցածր ջերմաստիճանում: Ընկերությունը փնտրում է գործընկերներ՝ կիրառելու համար այս առաջարկը տեխնիկական աջակցությամբ առևտրային կամ տեխնիկական համագործակցության համաձայնագրի ներքո:

Ծածկագիր. [TOUA20180118001](#)

## Տեխնոլոգիական համագործակցության հարցումներ

### Ծրագրային ապահովման լուծումներ բժշկական անիմացիայի և վիզուալիզացիայի համար

Գերմանական ընկերությունը, որը մասնագիտացած է մարդու անատոմիայի եռաչափ (3D) վիզուալիզացիայի և անիմացիայի, ինչպես նաև ընդլայնված ու վիրտուալ իրականության լուծումների մշակման ոլորտում, փնտրում է գործընկերներ շուկայական ծրագրային լուծման մշակման համար՝ բժշկական և կրթական նկատառումներով:

Ընկերությունը ցանկանում է համագործակցել համատեղ ձեռնարկության կամ գիտահետազոտական համագործակցության պայմանագրի շրջանակում:

Ծածկագիր. TRDE20180130001

### Գերմանական ընկերությունը փնտրում է քիմիական հավելումներ

Գերմանական ընկերությունը, որը գործում է քիմիական արդյունաբերության ոլորտում, փնտրում է քիմիական հավելումներ, որոնք կարող են կանխել յուղային հիմքով հեղուկների հոսքը խողովակների մեջ: Համագործակցությունը կարող է իրականացվել համատեղ ձեռնարկության, լիցենզավորման կամ հետազոտական պայմանագրերի շրջանակում:

Ծածկագիր. TRDE20171211001

# Եվրոպական նորություններ և միջոցառումներ

Ձեռնարկությունների եվրոպական ցանցի շրջանակներում կազակերպվում են բազմաթիվ միջոցառումներ, որոնք հնարավորություն են ընձեռում գործարարներին հանդիպելու հավանական գործընկերների հետ և ստանալու անհրաժեշտ տեղեկություններ՝ եվրոպական շուկա մուտք գործելու համար:

Ստորև ներկայացվում են 2018 թ. -ի մարտ, ապրիլ ամսիսների ընթացքում կազմակերպվող միջոցառումները:

## Մարտ

<p>15/03/2018 - 16/03/2018</p>	<p><b>Meet the health R&amp;D and professional ecosystem – MedXperience (Փարիզ, Ֆրանսիա)</b></p> <p>Այս միջոցառումը կենտրոնացած է Փարիզի տարածաշրջանի առողջապահական հետազոտությունների և պրոֆեսիոնալ էկո-համակարգերի վրա (ախտորոշման վերջին հետազոտությունները, էլեկտրոնային առողջության, առաջավոր թերապիաների):</p> <p>Հանդիպեք և համագործակցեք առողջապահական ոլորտը ներկայցնող ֆրանսիացի մասնագետների, ինչպես նաև միջազգային ընկերությունների հետ՝ նոր գործարար առաջարկների շուրջ բանակցելով :</p> <p><a href="https://een.ec.europa.eu/tools/services/EVE/Event/Detail/e6a4f8c9-599d-40f3-808c-b854e9f37c23?&amp;nolayout=true">https://een.ec.europa.eu/tools/services/EVE/Event/Detail/e6a4f8c9-599d-40f3-808c-b854e9f37c23?&amp;nolayout=true</a></p>
<p>16/03/2018</p>	<p><b>BUDGRYF &amp; HOME- a matchmaking for construction, energy and interior decoration sector (Լեհաստան)</b></p> <p>Միջոցառումն ուղղված է ՓՄՁ-ներին, գիտահետազոտական ինստիտուտներին և այլ կազմակերպություններին, որոնք շահագրգռված են համագործակցություն հաստատելու շինարարության, էներգետիկայի և ինտերիերի դիզայնի ոլորտներում:</p> <p>Հիմնական թեմաներն են՝</p> <ul style="list-style-type: none"> <li>- Շինարարական նյութեր</li> <li>- Մեքենաներ և գործիքներ</li> <li>- Շինության և ներքին հարդարման համար նյութեր</li> <li>- Վերականգնվող և պայմանական էներգիա:</li> </ul> <p><a href="https://een.ec.europa.eu/tools/services/EVE/Event/Detail/ef55f38b-adc6-46b2-99ad-d847fa3742cc?&amp;nolayout=true">https://een.ec.europa.eu/tools/services/EVE/Event/Detail/ef55f38b-adc6-46b2-99ad-d847fa3742cc?&amp;nolayout=true</a></p>

## Ապրիլ

<p>24/04/2018- 27/04/2018</p>	<p><b>Food &amp; Hotel Asia 2018 (Մինգապուր)</b></p> <p>FHA Ցուցահանդեսը՝ սննդի և խմիչքի ոլորտում աշխարհի ամենախոշոր ցուցահանդեսներից մեկն է հանդիսանում: Դուք կարող եք գտնել դիստրիբյուտորներ, մատակարարներ և գործընկերներ՝ ձեր բիզնեսը ընդլայնելու համար: ՁԵՑ Մինգապուրը կազմակերպելու է լայնամասշտաբ գործարար համագործակցության հաստատման միջոցառումներ FHA Մինգապուր ցուցահանդեսի շրջանակներում:</p> <p><a href="https://een.ec.europa.eu/tools/services/EVE/Event/Detail/6c82edc3-aa4d-4bd3-90c2-f7dc37ad117e?&amp;nolayout=true">https://een.ec.europa.eu/tools/services/EVE/Event/Detail/6c82edc3-aa4d-4bd3-90c2-f7dc37ad117e?&amp;nolayout=true</a></p>
-----------------------------------	---



Վերոհիշյալ միջոցառումների վերաբերյալ առավել մանրամասն տեղեկատվություն ստանալու համար խնդրում ենք դիմել ՁԵՑ Հայաստան:

**Նշում:** Եթե Դուք փնտրում եք գործընկեր արտասահմանում կամ նոր շուկա՝ և ցանկություն ունեք ներգրավվել ցանցի տվյալների բազայում, խնդրում ենք դիմել ՁԵՑ Հայաստան՝ համագործակցության հայտաձևեր և այլ համապատասխան տեղեկատվություն ստանալու համար:

Հարգելի գործարար,

Գրանցվեք հետևյալ հղմամբ՝

<http://een.ec.europa.eu/tools/services/ExpressionOfInterest/Customer/Create?shid=32db25cb-726f-43b0-8b5f-7742d0935799> և ստացեք անվճար

հաղորդագրություններ Ձեր էլեկտրոնային փոստին նոր գրանցված բիզնես առաջարկների, միջազգային միջոցառումների վերաբերյալ:

**Մատուցվող բոլոր ծառայություններն ու տեղեկատվությունն անվճար են:**